ԱՐԵՎԱԾ

7 ՏԱՐԻ Թ · 212 — ՀԱՅԵՐԷՆ — 13 ՕԳՈՍՏՈՍ 1863

ԵԱՌԱՓԱԿԱՆ

Ինչ որ խմբագրութեան և Տնօրէնութեան կը վերաբերի պէտք է ուղղել ա՛ռ ԱԲՐԱՀԱՄ Գ · ՄՈՒՐԱՏԵԱՆ Մահմուտ փաշայի տակը Սուլթան Համամիին վերի քով · Գոլթօկրաֆի նամուխը — Անվճար նամակ կամ ծրար կը մերժուի ։

Օրագիրը ամէն շաբթու երեքշաբթի օրերը կը հրատարակուի ։

Գին տարեկան 120 ղուրուշ արծաթ · — վեցամսեայ 70 · — եռամսեայ 40 · — մէկ թիւը 4 ղուռուշ · Գուրս կու գուան Օրագրոց Ճամբու ծախքը ընդունողին վրայ է · — Ծանուցման տողը 1 ղուռուշ ։

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՒՆՔ ԿԸՆԴՈՒՆՈՂԻՆ

Կ · ՊՕԼԻՍ Օրագրոյս գրասենեակը , Մեծ—Նոր — Խանի վերի դուռը Թիւ 2 ։

ՀԱՄԻՒՆԻԱ Տեարց Ալեքիքեան եղբարց վաճառատունը և ԾԱՂԻԿ Հանդէսին գրասենեակը ։ ՏՐԱԳԻԶՈՆ՝ — Խաչատուր աղա Էրմասեանի գրասենեակը ։ ԹԻՓՒՐՏԱՂ Յարութիւն աղա Գ · Ճամճեան ։ ՆԻԿՈՄԻԴԻԱ Պ · Հաճի Յակոբ Նազլեթեան ։

ԽՐԻՄԵԱՆՆ Ի ՄՈՒՏ

Տե՛ս Եր— 210

Խրիմեանի Թշնամիները Խրիմեանը զբաղարտած են նաև Թէ ժողովուրդը ապստամբութեան կը դրդռէ ։

Թղթատուէնիք այն յայտարարութիւնը այն ամէն Թերթերը որ Խրիմեանին Տարօնոյ մէջ հաստատած տպարանէն ելած էն . և չի գտանք նշոյլ մը որ ժողովուրդը ուղղակի կամ անուղղակի Օսմանեան լուծը՝ Թօթափելու հրաւիրած ըլլայ ։ Սակայն դիցուք Թէ ատոգիւ այդպիսի բան մը քարոզած ըլլայ , ո՞վ է Խրիմեան որ կարօղ ըլլայ 6·7 հարիւր տարուան մեռեալ մը յարուցանելու ։ ժողովուրդ մը ապստամբեցնելու ։ որ իրիկունը պարկած աւետը առաւօտեան ուտելու հացը կը մնածէ , որ ամէն օր քիւրտին կռւելը կուտէ գլխուն և որ սոսկ զօրականի մը անունը լսելով լեզապատառ կ՚ըլլայ · և դնենք Թէ Խրիմեան կարօղ եղաւ ժողովուրդն արթնցնելու , ո՞վ է այն կոյ ժողովուրդը որ Օսմանեան մեծ զօրութեանը դէմ գնելու կարողանայ ·· ··· խենդութիւն է մտածելը Թէ օր մը ուշ կամ կանուխ պիտի գլուխ վերցնէ Օսմանեան կառավարութեան դէմ և վայրիկ մը պիտի դիմանայ անոր զօրութեանն առջև · Հայ որ ոչ զէնք ունի , ոչ զինարան , ոչ կրթութիւն և որ մեծագոյնն է ոչ սիրտ ունի · Հայը յուսահատութեան մէջ ալ չկրնայ նէ՝ իւր վերջին շունչին մէջ Թերևս պիտի կռւէ այո · բայց ոչ Թէ տերութեան դէմ , որմէն մինչև ցարդ ուղղակի անիրաւութիւն մը տեսած չ՚ըլլալուն շատ լաւ հանդուրժած է , պիտի կռւէ իր ազգային հարուստներուն դէմ , որոնք ՝ժողովուրդին և տերութեան մէջ կայնած՝ տերութիւնը չեն ցուցներ ժողովրդին և իրենք անոր անունովը ամէն տեսակ հարստահարութիւն և ամէն տեսակ զրկանք կրնեն ժողովուրդին ։

Մուշի ժողովուրդը ազգային պատրիարքարանով Հանդերձ երկու խեղճ վարդապետի և երկուք ու կէս անունով միայն հարուստ հայերու դէմ չը կրնար կոր դնել՝ տերութեան դէմ պիտի ապստամբի եղեր և ան ալ Խրիմեանին ձեռքով և ան ալ լուս գիրներու միջոցով , մինչդեռ Խրիմեանի հրատարակած Թերթերը կարդալու և հասկնալու մարդ չկայ այն ժողովուրդին մէջ , որովհետև նախ կարդալ գիտցող մարդ չկայ ։

Կենդանի է տէ՛ր , մեր ծիծաղը կը շարժէ Խրիմեանի վրայ եղած այս զրպարտութիւնը և այնպէս կը հաւատանք Թէ քիչ շատ խելք ունեցող որ և է աստիճանէ մարդոց վրայ ալ սակէ աւելի ազդեցութիւն կրներ այս զրպարտութիւնը ։

Ատոգիւ՝ Խրիմեանի հրատարակութեանց մէջ կան այնպիսի կէտեր որոնց ծուռ և չարաչար Թարգմանութիւնը կրնայ զրպարտողներուն ուզածը տալ ։ Խրիմեանի անօրինութեանն հրատարակած Թերթերուն մէջ

տեղ տեղ հայրենասիրութեան վրայ գեղեցիկ և ազդու գրվածներ կան . սակայն ասով լ՚ինչ պետք է համնալ . հայրենեաց ազատութի՚ւն կը քարոզվի թէ հայրենիքը Թողլավ ուրիշ երկիներ չգաղթելու յորդորանք կը տրուի . առաջ միտքով կարգացողները պիտի տեսնեն թէ այն հայրենասիրական ճառերը կը յորդորեն ժողովուրդը որ համապատկին մէկ քանի չար հոգի անձանց պատճառով չը Թողուն չ՚երթան իրենց երկիրը, առունը , տրտեղը , այգիները ու պարտէզները , որ իրենց հարցը քրտինքովը կանգնված ու ոռոգված են , այն հողը ուր մէն մի քայլի այր, հայը իր նախնեաց մէկ տխուր կամ լքերկրահրի յիշատակին կը հանդիպի . ուր հայուն նախնիքը կը ննջեն հոն իրենց կառուցած փառաւոր վանքերուն ներքև որոնք , հայուն այն հողին պակսելովը քիչ առենին առյլ պիտի մը նան և աւազակներու այր ու բուներու բուն պիտի պառնան ։

Խրիմեան կը տեսներ որ Մուշի և Տարօնոյ ժողովուրդը մէկ քանի անպիտան , պրտաբոյծ և արծաթասոյտ վարպապ՚ետներուն և ի մէկքանի ալ ժողովուրդին քրտանցը արդիւնքովը հարստացած անգութ աշխարհակալներուն երեսին կը Թողուր այն բարերները ու բազմաբեղ ընդարձակ դաշտերը , զոր Օսմանեան կայսրութի՚ւնը առատորէն և ձրիաբար բաշխած էր անոր , ու ներքնատ օտար տէրութեանց երկիրը դունդ դուռ հոց կը մուրար և քիչ մը հոգ կը ինդրէր . Խրիմեան կը դուշակէր Թէ այս ճամբով Տարօնոյ մէջ քանի մը տարիէն եաքը Հայ չտիսի ՚ւնար բայ ՚ի անոր տխուր յիշատակներէն . . . այսպիսի ժամանակ Խրիմեան ժողովուրդին ապատամբութի՚ւն կը քարոզէր Թէ ոչ ժողովուրդը իրենց հայրենի հողին վրայ մնալու կը համոզէր , մէկ կողմէն ալ անոնց գաղթականութեան պատճառները վերցնելու աշխատելով : Աբծուխիւ , Մուշի վանքին հրատարակված տարբերական Թերթը ժողովուրդին կը հասկըցնէր Թէ անխնայ քրիստոնեայ Թողուլ երթալ հայրենի երկիրը մէկ քանի չար մարդոց ձեռքին ազատելու համար , և հայրենասիրութի՚ւն կը քարոզէր՝ հայրենեաց ազատութի՚ւնը կը քարոզէր այո՛ այն մէկ քանի չար սիրտ անխիղճ մարդոց ձեռքէն, որոնց վարմունքն ալ կառավարութեան կամացը դէմ էր . կառավարութի՚ւնը այսօր ինքը իր հպատակները չհարստահարելին եաքը չէր հաճեր անտարակոյս որ իրեն հպատակ ներին ամենքը իրար առանձնաշնորհեալ մարդիկ ելնեն իր հպատակները կեղեքին . ասի կը հասկըցնէր Խրիմեան իր ժողովուրդին և կը խրատէր զանի որ փոխանակ ինքը հայրենիքը Թողելու այն մէկ քանի անձինքը հայրենիքէն հանելու կամ խելագերելու աշխատի և ասոր ինքն ալ իր հողին կ՚աշխատէր . մեր հայերը իրենց տպիտութեանը տակրացած՝ մանաւանդ գաւառներուն մէջ գերի՚ն են եղած ազդեցութեան տէր մարդոց . անոնք երկար առենն ՚ի վեր եկեղեցականին առջև մամ վաւելով և հարուստ աշխարհականին առջև խոնկ ծխելով երկրպագութի՚ւն կընեն և անոնցմէ իրենց հասած չարիքները տէրութեան կողմէն հասած կը կարծեն , վասն զի անոնք միշտ տէրութեան անունովը կը կեղեքեն ժողովուրդը . — Վասն հայ մեծամեծները տէրութեան զօրաց ձեռքանոց պիտի չինենք ըսելով ժողովուրդին ստակը յափշտակելու ելած էին . — Աբծուխիւ և Խրիմեան պիտի լուսաւորէին ժողովուրդը և պիտի հասկըցնէին Թէ ժողովուրդն աւելի մեծ է Թէ ինքնին Թէ՝ տէրութեան առջև և Թէ Աստուծու առջև քան Թէ այն մէկ քանի անաստուած Աստուծու ինքնակոչ պաշտօնեաները և մէկ քանի անխիղճ ու բարբարոս հայերը Տէրութեան ինքնընտիր ժողովուրդին՝ Թէ աստուծու ինկածը աստուծոյ տալու է , կայսեր ինկածը կայսեր տալու է, իր ու ասոնց մէջ միջնորդ մի միայն անոնք ընդունելու և յարգելու է որոնց վարմունքը համեմատ է Աստուծոյ և Տէրութեան ՝սրտին ։

Խրիմեանի անխիղճ Թշնամիները . Խրիմեանի քարոզած հայրենասիրութի՚ւնը Տէրութեան կողմէն վարձատրութեան արժանի է . Խրիմեանի քարոզած հայրենասիրութեան պատճառը եՀԹ մի միայն սա ալ ըլլայ Թէ մի դուցէ հայերը օտար երկիր գաղթելով և հոգով ալ անուսով ալ Հօտարանալով և կորընչելով ինչպէս օտարացած և կորած են մինչև յարդ գաղթականները , ազգին մեծ և զօրութի՚ւնը պակսի , դարձեալ Խրիմեան Տէրութեան մեծ ծառայութի՚ւն մը ըրած կ՚ըլլայ Թող չըսեսլով որ երթան հայերը օտար տէրութեան մը հպատակին և օտարի հողը մշակեն Օսմանեանհողը պարապ Թողուլ . հայերը աշխատկի են հանդարտ ին հլու և են աշխատասէր ժողովուրդը կրնան համոզվիլ ։

Խրիմեանի Թշնամիքը Թող չ՚ուրախանան ամենևին յուսալով Թէ իրենց զրպարտու-

Թիւնը պիտի յայտնի եւ իրենք իրենց քաղաքանայ պիտի հանին . այսօր ամեն մարդ պիտի Թէ ով են իրենք եւ ով է խրիմեան . Ք . գուան ալ պիտի իմանայ ամեն բան եւ պիտի հասկնայ Թէ հայաստանի այլ եւ այլ գաւառներուն մէջ ժողովուրդին կրած Թշնամութեան եւ օրէ օր ոտքատութեանը գլխաւոր երկու պատճառն ալ ժողովուրդին եւ կղերին տգիտութիւնն ու անոր մէջ գտնված հարստահարիչներուն չարութիւնն է ։

Այն պիտի հասկըննէ ազգը Ք . գրան եւ ուշ կամ կանուխ պիտի կորնչին Տարօնոյ գաւառին ժողովրդական բռնակալները , ինչպէս նաեւ ամեն գաւառներու մէջ գտնված այդպիսի մարդիկը ։

Այս այժմ մեր մաղթանքը եւ ջանքը այդ պիտի անձանց համ անոնց չարութեանց բարձմանը համար պիտի ըլլայ ։

Վանեցւոց մէկ բողոքը ընդդէմ Վէրժուխի Հոռոմ Լուսաւորչի ։

Վերժուխի հոռոմ նորածին լուսաւորիչը առաջին ճին հրատարակած փոքրածաւալ Թերթովը չնորհը ըրեր էր մեզի մեր վիճակիս հրատարակութիւնը իր ընթերցողաց հաղորդելով՝ ի պետէ ընդհակառակ ինք իմին ։

Մեր յայտարարութիւնը օրինակիվէն եաքը իր կոչին ալ մեկ քանի տողով խորհրդածութիւն մ'աւելցուցեր էր . որով մեր վերջին ճառը եւ մեր իրաւունքը ճանչնալ տալու համար առաջադրած միջոցը բացատրելով կրճնախոհութիւնը հասուն խնդրի գործ չէ եւ ձգհալէրէն առաջ կուգայ ըսեր է ։

Քաւ լեցի որ այս ճշմարտութեան դէմ մնաբառինք եւ առ ալ կը պրպտէ Ղ . խմբագրին Թէ մենք իրմէ շատ առաջ բարոգած ենք ապի եւ մեղադրած ամեն անոնք որ ի նոյն ձեռնարկած եղին մինչեւ օրս ։

Սակայն հիմայ մեր անձին փորձովը կ'իմանանք Թէ մինչեւ այսօր Լուսաւորչական եկեղեցին ենթոնեներուն ամենամեծ մասը ինչ ստութեան յուսահատութեան մէջ ընկած ժամանակին է որ գնացեր են օտարի գուռը գարնելու . և ամենեւին մեղադրանաց արժանի չ'են անոնք ։ Որ տասը տարուան մէջ մանաւանդ լուսաւորչական եկեղեցին ենթոդ հայոց մեծ մասը պատրիարքարանին երեսին վրայէն և առ որ Թողութեան կամ անհոգութեամբ իրենց վիրաւորներուն և Թէ հարուստ անձերու ձեռքին ազատելու համար է որ օտարին դիմեր են ; և նոքա՝ պարծանօք կ'ըսենք , մեղի չափ լուսաւորեալ չ'ըլլալնուն համար բումքաքուի պատրիարքարանէն հեռացած առեն իրենց ամեն եղբայրներէն ալ հեռացած են . սակայն մենք մի միայն պատրիարքարանին ձեռքէն և հեռաւոր մեղի անիրաւող առաջնորդին ու մի ձամ ձներուն ձեռքէն ազատելէն եաքը մեր եղբարց հետ միշտ այնպէս պիտի վարվինք ինչպէս վարված ենք մինչև ցարդ և մեր գտած պաշտպանութեան տրիտուր՝ մենք ալ մեր ձեռքէն եկածին չափ մեր եղբարքը պիտի պաշտպանենք՝ զրկանք և անիրաւութիւն բնաղներուն դէմ ի նոյն մեր գտած պաշտպանութեան ։

Վէրժուխ հոռոմիքը Թող ուշի ուշով կարդայ մեր յայտարարութիւնը , Թող հարցնէ իմաստ Թէ մենք , որ առենով ազգին և աղքատին՝ այնչափ օգտակար եղած ենք մեր պատմիչ ու հարստութեամբ սյսօր ինչ առեն կարօտ ենք այլոց գիտութեանը և ինչ առիթան խնդրութեան ու չքաւորութեան հասած ենք . Թող հասկնայ ասի , Թող մեզ ձեռ անգամ մը Թէ պատրիարքարանը իր մէկ գրովը փակած է այսօր Ք . գրան մեղ դէմ և այն առեն կրնայ նե Թող մեզադրե մեզ ։

Բայց գնենք Թէ առաջին մեղադրանաց արժանի է մեր առաջադրութիւնը . խմբագրին մէ պատրան է ժողովուրդն իր երեսին սխալ և անել ճամբէն գարձնել . խմբագրի մը պարտքն է ոչ միայն ժողովուրդին ըրածը դէշ ըլլալը հասկըցնել իրեն և համոզել զինքը որ Թա կենայ իր այն ընելքէն , այլ և պարտքն է անոր ուղիղ ճամբան ցուցնել և այն ճամբուն ուղիղ ըլլալը հասկցընելով յորդորել զինքը որ այն իր ցուցած ճամբան հետևի ։

Մենք այնչափ պինդ գլուխ և կամակոր չենք . մենք մեր առաջադրութիւնէն Թա կը գառնանք . Թող Ղ . խմբագիրը բարեհաճի մեզի ուրիշ ապահով և անվնասարեւի միջոց մը ցուցընելու մեր իրաւունքը ձեռք բերելու և մենք ամենայն սիրով կ'ընդունինք . ապա Թէ ոչ քամեզարի գմեզ ոչինչ և ոչ ոք ։

ՏՈՐՈՒՆԵՐ ՏՈՒՏՈՒՆՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Ա.

ԱՒ ԱՓԱՊԻ ՏՈՒՏՈՒՆ Ի ՔԱՏԸ ՔԷՕՑ

Լսեցի որ մեծ պակասութեան մը մէջ կը գըտնվիք եղեր. չիտակը չատ մեծ ցաւ եղաւ ինձի, եւ չատ զարմացայ այնչափ որ հաւատալը չըգալ. ինչ, Ա.քսպալի տուտուն Թուղթ խաղալը ֆերահաթ ընէ . . . . ինչու համար . . . հանըմ, իրաւ է որ հինայ ամառ ըլլալով անդին, ատդին կը պըտըտիս, ցերեկը Մէօհիւրսար, Մ'օտա, Ֆէնէռ-Պահճէսի, Զիֆթէ Չավուշ, Եօղուրտլու Զէշմէ կ'երթաս. գիշերը մուղնքապը խահվէն կամ լուսնկային ծովուն վրայ կը պըտըտիս, բայց չես մոռածեր որ ձմեռը նորէն Բերա երթանք'նէ՝ հոն սիրտերնիս նեղացած ատեն Թուղթին, Թավլուէին զատ ուրիշ բան մը չ'ունինք. իրաւ է որ ձմեռը Թատրոն կայ եւ մեր աղաները մեզ հոն տանիլ չատ կը սիրեն՝ Թատրոնը ձեզ կը կրթէ ըսելով՝ սանքի մենք կրթուելիւն չ'ունինք. էյ ինչ է իշտէ անցած տարի, առջի տարին քանի մը հեղ գացինք. չիտակը զրուցէ համ մը տալիր. եղեր են ինծի զրաբառ բաները կը զըրուցեն. ես անկէ ինչ կը հասկընամ. ասկէ զատ չէ՞ մի որ մեր աղաներն ալ չատ հեղ մեզի Թատրոն տանելնուն համը, մեզ հոն կը ձգեին, իրենք մեկուն տունը կը ժողվըվէին Թուղթ կը խաղային: 'Չէ տուտուս, չ'է հանըմըս, չ'ըլլայ որ Թուղթ խաղալը ձգես. միայն ըսը՝ հեղ մը ինչ աղէկ տանն կ'անցընէինք Թուղթ խաղացած գիշերնիս. վաստկած բարտոմիսս նոր մատաները կը չինէինք, կորսընցընէինք նէ՝ աղաներէն մեկը կը հանէր մեր ստակը կուտար. դիտես գիշեր մըն ալ ականջս 'ի վար ըսիր որ ալլահալէմ Սրթին աղան Ֆուլիկ հանըմը չատ կը սիրե կոր. ինչու որ ամեն հեղու անոր կորսընցուցածը ան կուտայ կոր, Գիտես իրիկուն մըն ալ Սիտօն աղան հետը ղեվղեկ մարդ մը բերեր էր, անոր ալ ովըլալը մինչեւ հիմա չհասկըցանք. ան մարդը ամենուս ալ բարտներըը ժողվեց առաւ, եւ Սերօբէ ալացէն վոխ առի նայէն խաղացի կրթվեցայ, հրամանքդ ալ չկրտամ որմէն վոխ առիր կրթվեցար, հետը ամենիս մէկէն ադղեվղեկին վրայ ինկանք վարանելը ձեռքէն առինք. ահ, ան իրիկունը ինչ լաւ կերանք. գիտես իրիկուն մ'ալ ստակդ հատաւ, պէտրասիկ աղան քեզի չատ մը ստակ առաւ տէյլ, քաւիմնդ ալ սրդողեցաւ ու Պարան չատ ստակ ունիս նէ-ևկու ինծի հետ խաղա ըսաւ. հրամանքդ ալ ճիտդ կախեցիր նստար. հետը քաւիմնդ եկաւ գնայ տէ ոնե, հինայ տահա համարձակ կը խաղամ ըսիր:

Էյ, հինայ աս խնտուխներըը, աս ուրախ Թիւններըը ձգես պիտի. հապա ինչով աոեն պիտի անցընես. Թատրոն պիտի երթաս գիշերները, անկէ ինչ համ կ'ելլայ. սէպէնք որ քու էն սիրականիդ հետ ալ գացիր, կէնէ բան մը չ'ես հասկընար. ես անցած տարի իրկուն մը Ա.ստիկ աղային հետ գացի, էյ չիտակը խեղճը մեկիկ մեկիկ ամեն բան ինծի հասկըցուց տմա ինչուս պէտք. կէօյա քի հինիկ մը իր զաւակը գողցեր տաւեր տարեր են, իրեն ալ իմացուցեր են որ՝ Թէ որ 20 հազար ֆրանք չըղրկե նէ զաւակը Թող տալու չեն, հինկն ալ իր տունը տեղը ծախեր, ունեցածը, լաթերը մալերը, ըռզակներըը ծախեր, ամենն ալ տալէնետը պարական ալ ըլլալով իր զաւակը ազատեր է. տառնք ամենն Ա.ստիկ աղան հասկըցուց ինծի. էյ տանք ինծի ինչ. ես հիչ բան մը չհասկցայ. հետքն ալ ըսի եա. Թատրոնէն կ'ելլայինք կոր նէ՝ իրեն ըսի Թէ տունը նստէինք քեզի հետ՝ եա Թուղթ, եա Թավլու խաղայինք նէ ասկէ աղէկ եր. եա կուտայի եա կ'առնէի:

Ասկէ զատ Թատրոնին մէջ բան մըն ալ կայ որ ան հելէ սրընըրներուս կը դպչի. հիմա դուն լօճան նստեր ես ա. կը նայիս որ վարէն վերէն, դիմացի լօճաններն ամենն ալ աժէմը չաժէմը աչքին վրայ աչք մ'ալ դրեր քեզի կը նային՝ հելէ ան Թատրոնին վրայի խաղացողներըը ըսես նէ՝ երեսնին ալ ատդին կըդարձընեն տէ չիտակ չիտակ քեզի կը նային իրաւ ես բեք եամանի կատաւ չ'եմ, չատ մարդու մէջ եղեր եմ, Թող նային հոգ չ'է ա մա, սա կէնէ սիրտ սիրելու մէկը նայի նէ ինչ է նէ. հելէ քի ինծի նայող չատ չըլլար. մեկ տանկ եադըըրնէ ըլլայ տէ նայի նէ՝ երեսս լուրն տանկ մէյ մը գարձունելուս պէս անդին կը գառնայ. իրիկուն մըն ալ անանկ սիրտս կատրեցաւ որ. քովի լօճայէն մեկը ծուխ տայ երեսս նայեցաւ. ես ալ քաղաքավարութիւն ըլլայ տէյի գարձայ անուշ նայուածքով մը իրեն նայեցայ. աս հեմէն անդին գառնայ տէ՝ քովինին ըսէ քի քըսվեր է, ըսէ. հեմէն բերան եկաւ պիտի ըսէի քի՝ կուզ տատաիդը

որպ՛ եմ քըսավեր ոչի, ետքը կ՛ինէ համբերու-թիւն ըրի. ալ ան կողմը չընայեցայ. չ՛իյտեմ քի ետքը ան ինծի նայեցաւ մի։ Թատրօն, թատրօն մը քի ամեն մարդուն մէյմէկ բան կըսեն։

Ըսինք որ տունը կեցար. Թուղթ չի խաղաս նէ ինչ պիտի ընես. ինծի անցած օր հանըմին մէկը կ՛ըսէր որ «չիտակը ես այնչափ կար ունիմ, տունի գործ ունիմ որ անոնցմէ առանց չեւելնար Թուղթ խաղալու կամ ուրիշ էյլէնճէ մը գտնալու։ Սա հանըմը ինչ կ՛ընէ եղեր գիտես. իր վրան դլուխը իր մարդուն ճերմակեղէնները, տղոցը լաթերը ամենն ալ ինք կը կարէ եղեր. ուհ. Աստուած հեռու ընէ. ես էյեր որ կար կարել ուղէի նէ դերձակ կ՛ըլլայի, ինչուս պէտք է որ ես կար կարեմ. մեծաւորս իս առաւ նէ՝ կար կարող տէյի չ՛առաւ՝ հանըմ տէյի առաւ, հաճաթին ետնէ Թուլ կարերս կարել տայ. մանրը մանրը կարերը տղոցը տատան կը կարէ՝ մեծ կաբերն ալ դուրս կուտանք. ինչո՞ւ, ես կաթ կուրելու, բան բաներու համար կարդըվեցայ. Աստուած չըսյուլլնէ. ան հանըմը կըսէ որ ինիկ մը իր երկանը, իր զաւկներուն լաթերը կարած առնեն, այնչափ ուրախ թիւն մը կ՛ունենայ որ ուրիշ մէկ բանով մէն ալ չ՛ինանար, իրէն մեծ գործանքը ան է կ՛ըսէ. էշն ինչ գիտե որ նուշն ինչ է. ինքը խաղալ չ՛էյ ոե բան չ՛իյտէ՝ կար կարելէն բան բաներէն անուշ բան չիկայ կ՛ըսէ։ Թող մէյմը մուսային դլուխը անցնի, Թող չըլլեմ մը ընէ Թող միկռա մը առնէ, Թող փարաները ժողվէ ան առնը կը տեսնայ որ ինչ անուշ բան է. ամա պիտի ըսես քի աս առնելուն տալն ալ կայ. ան ալ հոգ չ՛է. կ՛թվիմ նէ՝ առակը խմինէս կ՛առնեմ, ան ալ հոն չ՛ըլլայ նէ մէկ ուրիշէն կ՛առնեմ. ետքը կուտամ. որ առնն ալ վատարկողը չ՛եմ ուզեր կ՛ըսէ կըլմնայ կ՛ելլայ։

Վաստակը մէկուն դէր. հապա ան աղաներուն հետ նստիլ ան խաղալ խնդալը ինչ կ՛ընես. կընայես մէկը կը տանչայ, ֆէսը մէկ դի կընետէ, կը կարմիլի, գոն ալ դէմը կ՛անցնէ մի. օվ՛ կեանք իմ՝ ախնատուր աղա, կ՛ըսես։

Աղքն ձգէ տէ, դնամինակ տեղ մը կամ քանի չորցած ու կոնճած պատառներու քով նստէ տէ առնկէ կորը կարէ. ինչ է չատ անուշ կուդայ եղեր։

(Մնացածն առաջիկայ ԹՒՒՆ)

Հետևեալը Աբծուկ Տարօնցին առնելով հոս կը դնենք։

Աւոշէ Տէր ղևոնդեան։

Թէ վարդապետ Թէ քահանայ, Թէ ծայրագոյն Թէ աբեղայ, Թէ սիրացու Թէ սարկաւագ, Թէ վարժապետ Թէ խալիֆայ, Թէ չինական և Թէ իշխան, եԹէ ծառայ և աղայ Թէ այր Թէ կին, Թէ ծեր պառաւ և Թէ տղայ, Աստուած սիրող մէյմէկ բերան ասէք Տէր ողորմեա՝։ — կարոյ մէջ ողորմելի հիւանդ մը կայ, աւազ աստուաղ քանի տարուց ի վեր անկողնոյ մէջ ինկած կը տեսյ. մայր մը իր զաւակներով ՀԿ տեղ, բնակարանը խիստ գծուծ և նեղ, օդն ու հոտը սաստիկ ապականած՝ չկայ երբեք մաքուր տեղ մէկ կողմից կից է տան — տանն երկու հարկաւոր, մէկալ հշտից ձիերու ախոռ, այնպէս զըվարար քամի մը կը փչէ որ ... մնաց երկու կողմը, մէկն է գերեզման, մէկալը շուկան. մեռելալը կենդանիք ամենը հոն կուգան...։

Այ՛ս յայտնի լոյս Աստուածասիրացդ, այս հիւանդը կ՛պնոյ Աբծնեան վարժարանն է. որ իրար ժամանակ իվեր ցաւալի դրութեան մէջ այցելութեան կարօտ կը նայէ, և ոչ ոք եղեր է այսչափ օր իր վրայ գթութեան և բժշկութեան աչք հայի։

Ի հարկէ քանի որ այն երկնասարսա և ամենափառահեղ Առաջ ողդական պալատն ու դարպասը բարձրացած կայ մէջ տեղը, որպ՛ աչք կը թողու ձգել ուրիշ տեղ...

Ժամանակ չէ, բաւական չէ այս տեղ և այսչափ միայն գրել այն առարկայի վրայ, սորսեցեք ուրիշ աւօր. առ այժմ ՚ի խորոց սրտէ 8էր ողորմեա ասենք։

Յիշելով սորա հետ նաև Վասպուրականի և Պիթլիսի Հայոց վարժարանները ալ. ոչ միայն հիւանդութեան և ցաւոց տեղալու ձայնը շատոնց կ՛լսենք. ըստ այնմ և ամէն գաւառներու ուսումնարանները յիշատակելով Տէր ողորմեա ասենք։

1863. Օգոստոս. 7

Աբգոյ խմբագիր Մեղու Հանդիսի.

Ժամանակ հանդիսին արգոյ խմբագիրը՝ Թուչնիկին 12. դ Թուոյն մէջ հրատարակուած յօդուածին մէջին սա խօսքերը կարդալով Թէ՝ «լոկ կրճատութիւնը մի միայն հանդուրժեալ կէտերին մէջ երկանկութիւն մը

ձեռք բերելու համար դրեթէ սրտաճմլտարութիւն մի է, եւ այս աշխարհիս մէջ մեր անցնելիք օրերուն օգուտ մը չկրնար ունենալ, եւ ոչ ալ կրնայ հոս մեզ երջանիկ ընել»։ Մեծ ցաւ կ'զգայ եւ կը յանդիմանէ այս խօսքերը ըսողին էծծուէ վրայով ունեցած սխալ գաղափարը։

Արդարեւ մենք ալ ցաւեցանք արդէն խմբագրին չափ, եւ մենք եւս կ'խոստովանինք իրեն հետ նոյն յօդուածը գրողին՝ այս մասին ունեցած ծուռ դատումը։ սակայն մեր բոլոր հասկրցածէն սա հետեւութիւնը կ'հանենք թէ՝ յօդուածին հեղինակը խել մը տգետ եւ չահասեր կղերին երեսէն դժբաղդաբար աղգին յետսախաղաց ընթացքը տեսնելով, կարի խիճ վշտացած եւ զայրացած կիրքով մը անոնց վրայ յարձակած ատեն, ճշմարիտ դատողութեան, սահմանէն դուրս ելեր, եւ փոխանակ՝ խել մը կղերականաց ձեռքը՝ կրօնքը չարաշահելու եւ անարգելու, եւ ժողովուրդը ճշմարիտ կրթութենէ զուրկ պահելու եւ իբրեւ գերի թշուառութեանց մատնելու դործիք մը եղեր է, ըսելու տեղ, ինչպէս որ իրօք ալ այնպէս է* կրօնքը պահպանակեր եւ ազգին երջանկութեան իրեն խոչնդոտներ կայացուցեր է։

Աւար առանձ ըլլալուն առաջուց կը բնդունինք հոս բուն իսկ իր խօսքերը թէ՝ «մեր այս ըսածէն թող չհասկցուի, թէ մենք կրօնքը չենք յարգեր, չէ՝ մենք կը յարդենք կրօնքը եւ անոր՝ ժողովուրդին որքան կարելւոր լինելը չատ լաւ գիտենք... ահ։ կրօնաւորը, կրօնաւորը, հայոց ազգը լաւ տեսաւ թէ ինչ սկզբունքներու վրայ հիմնեալ են ձեր բարոյականութեան գաղափարները եւ դատերը.. եւ ձեր ու ճշմարիտ բարոյականութեան մէջ եղած տարբերութիւնը մինչեւ որ չյայտնէ, չ'պիտի մեռնի յօդուածին հեղինակը։ եւ»։

Ամենք ակնառելի իր առջի ըսածին բոլորովին հակառակ ըլլալով, չենք կարծեր կրօնքին՝ աշխարհիս մէջ մեր անցնելիք օրերուն համար անօգուտ, բարոյականութեան հակառակ, ազգային յառաջդիմութեան խանգիչ, եւ վերջապէս ուտա ու չինծու եղած ըլլալուն ծուռ ու նոր վարդապետութիւնը խղճի մտօք ընդունած եւ այնպէս բարոզելու դիտաւորութիւնը ունեցած ըլլայ։ որով եւ Բրիտանոսի եկեղեցւոյն դէմ մեղանչելու։ եւ ազգին մէջ անհաւատութեան ոգի տանելու վտանգին եւ անելիքին մեղքը գործելու յանդգնութիւնը զրկած ըլլայ։ մինչեպէս որ խմբագիրը կը ջանայ ցուցնել։ սակայն ինչպէս որ վերը յիշեցինք, յօդուածին հեղինակին, այն խօսքերը ըսկ՝ ի կրկեւ՝ ի մեծաց յանդգնութենէ ծագած ըլլալով, ճշմարիտ դատողութենէ չեղեր եւ հետեւապէս սխալեր է, եւ արդէհետեւ կիրքով գործուած մեղքին ալ 1861. օգս. 2. ին համաձայնութեան վճիռ տրուեցաւ, որ ամենուն յայտնի է, վասնզայ յօդուածին հեղինակին այս խօսքերն ալ արդէն ներելի կը համարուի։

Սենք յօդուածին հեղինակը նզբայրաբար կ'խրատենք, հայաստեաց կրօնական մասին բան մը գրած առեն կիրքով չգրել, որ գործեալ չմեղանչէ, վասն զի կը յուսանք թէ ազնիւ սրտութեան չնորհիւ, քանի մը ամիսէն օրինաւորութիւնը սիրով թագաւորէ։ եւ այն համաձայնութեան կրօնական ժողովոյն կիրքով գործուած մեղ քերուն, մեղք չհամարուելուն համար տեսած վճռոյն ուժը պիտի կատարի, եւ հետեւապէս ինքն ալ դատապարտութեան ներքեւ կինայ ան առեն։

Յ. Մ. Գ.

Պալատու դպրոցի ընդերքին գոհարիսնիքը
ի Սալմանօմրուզ։
1863 Օգոստոս 11։

Ազգասիրական յանձնաժողովին անօրէնութեանը համեմատ՝ մեկ քանի օր առաջ Պալատու միացեալ թաղերուն մէջ 1000ի մօտ քուէթուղթեր տարածուելով՝ առ ինքեանք Սալմանօմրուզի կուսանաց դպրոցին մէջ քուէարկութիւնը հաստատուեցաւ հանդարտ և խաղաղ կերպով։ ուր ներկայ գտնուեցան Պ. Ց. Ղեղամեան Սրբազանը, Վարդանեան Պ. Ցեղամեան Սրբազանը, Վարդանեան Պ. Ցեղամեան Սրբազանը, Վարդանեան Պ. Ց

ախս Ա.ղայ Գոլըեանը , եւ Ա.զգայնի Վարչաթեան կոմսին իրրեւ տեսուչ Ղալաթիոյ Ս . Լուսաւորիչ եկեղեցւոյ Տ . Յարութիւն քահանայն եւ Մեծարգոյ Ա.բիկ աղան :

Բայց չը մոռնանք ըսել որ՝ այս միջոցներուն ամենէն առաջ մուտքին գոչող եւ միանգամայն ընդդիմացող մէկ քանի հակառակորդաց արբանեակներուն խումբը անգոյ չէր* . որոնցմէ մէկին ալ ամենէն վարպետ երեսնալու համար (դուցէ չահու առնելու յուսով) շարաթ օրը առաւօտները պատրաստուած դրուած քուէթուղթերը պատճառանքով մը կը ժողովէ մինչեւ 180ի չափ . անշուշտ ան յուսով որ՝ քուէտուղներուն թիւը կարելի եղածին չափ պակաս ելլէ՝ ինչպատառ իրենց բանեցնելիք վարպետութեանը :

Ա.յսու ամենայնիւ մինչեւ որոշեալ ժամուն բերուած քուէներուն թիւը 329ի հասաւ . որ ցրուած նամակաց կէսէն աւելին ըլլալով ըստ օրինի քաշուեցաւ եւ ինք անձինք բացարձակ առաւելութեամբ եկան , եւ մնացած երեքն ալ անշուշտ առ չոքթիու կրկին քուէարկութեամբ ընտրուելով տակն բան կը լինայ :

---

* Վանէն հետեւեալ ցաւալի ազդեցութիւն պատժուելը գրած են . որուն առջեւ բար սրտերն անգամ կը հալին . առաջօք բարձր ականջներ պիտի լսեն . . . :

Վ.ՆԱ 16 Յունիս 1863

Պատուական Սուրբ Հայր

« Ներկ Հայր , խօսքերս չեմ կրնար երկարե ընել , համառօտ պիտի խօսիմ այսօր . զի այսօր Վաստուրական առ հասարակ վըրդոված է , Հայերը խանութներին գոցելով Առաջնորդարան լեցուեցան , թէ և առաջնորդ ալ չունինք : Զի այս գիշեր Ա.ր յարոյց Թագ չարագործներ կը մնան Պէօշկնց Մ . Մարգարին տղոց տուն , գրիզոր սրահաղիող կընէն , և միւս եղայրն ալ իրէք չորս տեղով կը վիրաւորեն և մահու վտանգի մէջ ձգելով սպանուած ձին հնօք վրայն ոսկեղէն եւ արծաթեղէն զարդեր առնելով կը փախչին , առ հասարակ ահ ու դողի մէջ ենք , գիշեր ցերեկ որ Հայ աղգի տուն գող չմնայ , օր չըլլար որ մարդ չսպանուի , այս ամառան մէջ 3 և 4 հոգի Ա.րտամետ գեղի մէջ սպանուեցան . Ա.բշակ գեղը , Բերդակ գեղը գարձեալ մարդասպանութիւն եղաւ . կըսուի թէ գիշերս Ա.ծար գեղն ալ մարդ մը սպանուած է : Տէր չունինք առաջնորդ չունինք , իշխան և ժողովական չունինք , մեր անպիտան առաջնորդ երկու անգամ եղաւ նահանգներ պտըտելու գացած է : սա մարդ՝ կարծես թէ Վասպուրականաց տղուկ մը եղաւ , չարտնակ արիւնին կրծծէ և չը կըշտանայ : Նախ այնքան մեռան ծախեց՝ Ա.բահիշու և Ա.ջամալազոյ կողմեր չպահպանացաւ . Յովհաննէս վարդապետ և Թէլէվեան գեղը գրկեց կով , եզ , ձի , ոչխար ևն կողոպտեց բերաւ լեցուց Կարմրոցայ վանք , որուն վանահայրն է Թէլէվեան (բարբարոս) Սարգիսը , և յայտնապես չէ՞ինչ մը ըրած է իրեն , անով չպահպանացաւ՝ եկաւ ինք անձամբ գնաց կողոպտելու և իրեն փոխանորդ խնդրու բարբարոս Պղիմէս աթէոսն ալ տեղս կրկեր ղէքի խեղճ Ժողովուրդը . երկու տող գրած ֆոսուլայի մը 2--3 ղրչ կառնէ , որ երբէք լըսուած և տեսուած չէը . աղքատի մը ժողովարարութեան դիր առած սահն անդամ փարայ կուզէ բռնութեամբ . Թողում նշանաւորքն , հօշման հրամանատարն և խաչ օծելու հրամանի տղոց բռնութիւնները :

Ա.հա այսպես ժողովուրդն բնաւրդ . մնացած կառնէ և ինքն անհոգ կը մնայ , և ժողովուրդ անհնարին տաքնացի մէջ կը Թողուն Ա.ստ կը խնդրուի որ այս տողեր բոլոր Ա.զգային լրագրաց հաղորդէք » :

Թող լսեն Պօլսեցի Հայերը մեր ազգայնոց խեղճ վիճակը . և գատրին այսուհետև իրենց անգին ժամանակը պարապ վէճերու վատնելէն :

« Ա.հա նիւթական բանք՝ որք առաստպել կամ կեղծեալ պատմութիւնք ինչ երեւեցուցանեն զայն :

« Հայ մի ծնեալ ի Պարսկաստան զգաղթել ի Գաբայ Հարիւր ամօք յառաջ , առաբեառաս արարեալ ընդ Բասրու եւ մեռեալ ի ծոլիս , չկոկալով զուցէ յետ հարիւր ամայ դատաւորն Բասրայու հրամայել վաճառել զնոսան ստացուածոցն իւրոց :

« Ընտանիք իւր ի Հարկէ սկսան կուտիլ ընդ միմեանս վասն գրամի իւր զոր ի նմին ժամանակի գործակալն Ա.ղդիացւոց տարեալ ի Բասրայի (գումարելով իրրեւ 90000

---

* Անիկ արբանեակներ ալ կան տուներնը պատրուող յատուկ նոյն նպատակաւ . որոնց վրայ հարկաւ օր մը հարկ պիտի բլլայ խօսիլ :

ռուփիք) զի յայնմ վայրի պաշարեալ էր Բասրայ 'ի Պարսից ։

Ի տան մեր զհամառօտ բովանդակութիւն բանին է գլխովին անհնարաւոր, ունիմք մեք զգիր մի կարողութեան զոր 'ի ցուցակութիւն ածաք 'ի Կալկաթայ. ունիմք եւ ըզկտակ մի 'ի Բասրայ ։ Գիր մատակարարութեան տուեալ եղեւ ումեմն 'ի տէրութենէն բանգալու, եւ այլում 'ի տէրութենէն Բումբայու 1777 թուին. ծածուկ խորհրդարանն Անգղիոյ վճռեաց թէ Ղազար Գրիգորիսն մեռաւ առանց կտակի. յետ այնորիկ գամք մեք յերեթերցուիս անթիւ անուանց եւ բառից օրինաց ։

« Ա՛յր ոմն Մկրտիչ անուանեալ զորմէ բազում բան զրուցին. եւ Տիկին մի Ովսաննայ անուանեալ, կրօնաւոր ոմն 'ի Մխիթարեանց միաբանութենէ՝ Սրբոյ Վանացն Ղազարու որ 'ի Վենետիկ ։ Սուքիաս Սղամալ անուամբ, եւ առանձին բարեկամ գերդաստանին Եփրեմ Յովսէփ կոչացեալ, Ծնեալ 'ի նմին քաղաքի որպէս Գրիգորիսն, բայց բնակիչ է Զանդրնագօրայ՝ որ 'ի Բանգալայ. եւ պահանջ ինչ յառաջ գայ յումեմնէ թէ ստացուածքն այն պիտի բաժանել . . . ։

Պարսիգան, բնակիչ ոմն Կաստանդնուպոլսոյ է միւս անհատն որ ունի զհամանակցութիւն ինչ յայսմ։ Ասոենական վկայութիւնք ինչ ընկալեալ առաջի Հայոց Պատրիարքին որ 'ի Կ. Պոլիս եւ վաւերացուցեալ 'ի Դեսպանէն Բրիտանացւոց այնր տեղւոյ՝ գտեալ եղեն ընդօրինակեալ 'ի 1787 թուին 'ի մատենի դաւոյ աստացեալ դատաստանին որ 'ի Յումբայի ։

(Մնացեալը հետեւալ թուով։

ՄՈՑՇԵՑԻՈՑ ԱՂԵՐՍԱԳԻՐ

(Շարունակութիւն և վերջ ։)

Հարկերը իրենց ուզածին պես կը բաժնեն եւ իրենց ուզածին չափ կը պահանջեն ու կառնեն, ոչ քաղաքականութիւն գիտենք ոչ օրէնսդիտութիւն, ոչ գիր ոչ հաշիւ. ինչ որ աչքին ճշմարիտ կը կարծենք ինչ որ հրամայեին իրաւունք կը համարենք . . . . Բայց այսուհետեւ փոքր 'ի շատէ և հետ զհետէ պիտի քննենք, պիտի գրենք և պիտի բողոքենք մինչեւ Բարձրագոյն դուռը. արդարութիւն հասնի մեզ ։

« Թագաւորի մեռնին շատ աշխատեց մեռ Ա. ռաջնորդը. բայց Ա.ռաջնորդի բացակայութեան՝ յանկարծ մէկ գիշերուան մէջ քանի մը հին նոյն և նմանները զիրար գտնալով լսրեր շահուց եւ պատուոյ համար սուր էին աղբատները ջնաջել եւ կեղեքել տէր [այս անգամ ևս զնոյն արարին ։ Յանկարծ փոխվեցաւ եղանակ, ջնաւեցաւ մեր վիճակ, վայ մեր կեանք. հրաման ներհակ, վճիռ ապիրատ և ձախորդ կերպարանք զգեցաւ այս գործ ։

« Գուցէ ցայժմ մինչեւ Բ դուռը հասուցած լինին մահաբերները, կամ իբր թէ մեր հաճութեան գիրերը մեր կնիքներով. սակայն ահա համարձակ կը բողոքենք այդ կընիք քանիմ անձանց է մինակ, եւ այն ժողված են մէ-մէկ կերպ կերպ հնարքներով թէ սուտ համոզմամբ, և այնպիսի միջոցներով որոնց մէջ երկիւղ և անիրաւութիւն կայ. այսպէս մեզմէ կնիք առին. իրենք գրեցին իրենք կնքեցին ու հաստատեցին թէ — ժողովուրդն հիւանի բիզայով ընդունեց ըզթաշիր ։

Ոչ, ոչ, ամենեւին ոչ, վասն զի ուղ կարէ այսպիսի բեռ մի չակել. որոյ ծանրութիւն մեր քամակի ոսկորները կը ջարդէ ։

» Ի՛նչ սովորութիւն կամ արտաքոյ արդունի իրաւանց օրէնք է այս միայն մեր աշխարհին, որ զթաշիրն գեղացին առնէ, մէկն տեղը բազմապատիկ տայ. և փարայ պիտի տայ. կարծես փարայ կը ցանենք փարայ կը հնձենք ։

» Եթէ այսպէս է Տէրութեան օրէնքը, մենք չխօսինք երբէք, ապա թէ ոչ նորա իբաւանց չնորհքն ու խնամքը կը հայցեմք փութով հասնի մեզ վերայ ։

« Ա.յս ամեն աղէտներ ու ցաւեր բառնալու համար, միակ ճար եւ հնարն է մի արդարասէր. գորովագութ, խոհեմ, հզօր, հողագործութեան ոյժ տվող. բարբարոսները զսպող, հպատակները պաշտպանող արիւն և խիստուն Գայմագամը. որ նստի 'ի Մուշ, Մուշ չի կառավարուիր առանց փաշայի ընդարձակ է այս վիճակ. մեծ է սուրա սահմանները. շատ են իւր բնակիչք. շատ մեր Թշնամիք. անիրաւութիւն, բռնաւորները, որոնց երեսէն է որ այսպէս շատ խեղճ եմք եղեր ։ ի սէր Ա.ստուծոյ մի Թողուք, կորուսինք մեք, մի Թողուք աւերի մեր հայրենիքը, ապրեցուցէք զՏարօն, կաղաչէ զձեզ Տարօն ։

Ա. · ՀԱՄԱԶԱՍՅԻՆ ՏՊԱՐԱՆ